— Այդ տունը լիքն էր երեխաներով... լիքն էր մայրերով ու հայրերով... հիմա տեսնում էք, մնացել է մի հիւանդ միայն եւ այս փոքրիկը, նա ցոյց տոեց կիսամերկ տղային, որ այժմ խլրտւում էր մօր բարձի մօտ: — Ամէնքը ոչնչացան... ամէնքը կորան... նրա համար, որ աղքատութիւնը մահոան հետ միասին է մտնում մարդու շեմքից...

Երեխան այժմ հեռացաւ մօր անկողնից, սողալով մօտեցաւ Ասլանին, բռնեց կօշիկներից, կանգնեց եւ իր փոքրիկ ձեռիկներով սկսեց խաղալ նրա ժամացոյցի շղթայի հետ: Ես միշտ երեւակայում էի Ասլանի մէջ քարէ սիրտ, բայց նա չկարողացաւ դիմանալ, երբ երեխան իր սեւ փայլուն աչիկներով նայելով նրա երեսին, ժպտաց եւ թոթովեց մի քանի խօսքեր: Դժբախտութեան զաւակը խօսում էր... խօսում էր աւելի ազդու, քան ամէն բողոք... եւ, կարծես, իր անհասանելի թոթովանքով ասում լինէր. «ինչո՞վ եմ ես մեղաւոր, որ ինձ աշխարհ բերեցին... միթէ՞ միայն տանջոելու համար»...

Ասլանը համբուրեց երեխային, վերկացաւ եւ, ձգելով հիւանդի բարձի մօտ ոսկիները, իսկոյն դուրս եկաւ թախծալի բնակարանից:

— «Աղքատութիւնը մահոան հետ միասին է մտնում մարդու շեմքից»... — ճանապարհին կրկնեց նա պառաւի իմաստալի խօսքերը: — Դա մի անհերքելի ճշմարտութիւն է: Որտեղ տիրում է թշոառութիւնը, այնտեղ աւելի մեծ թոով զոհեր է տանում մահացութիւնը: Ոչ մի ժողովրդի մէջ չէ կարելի յուսալ կանոնաւոր աճելութիւն, երբ որ նրա տնտեսական դրութիւնը օրինաւոր պայմանների մէջ չէ դրուած: Այդտեղից հասկանալի է, թէ ինչո՞ւ մեր ժողովուրդը օրըստօրէ սպառւում է: Այդ սպառմանը աւելի զարկ է տալիս գաղթականութիւնը: Տղամարդը, իր կեանքի ամենաթարմ տարիները պանդխտութեան մէջ մաշելով, զրկւում է գերդաստանի հայր դառնալուց, որդիք եւ սերունդ առաջ բերելուց: Իսկ ինչ զաւակներ էլ որ թողել է տանը, աղքատութեան մէջ մեռնում են: Ահա, մեր աչքով տեսանք մի հոյակապ ընտանիք, որ հանգչելու մօտ է: Բայց քանի հազար այսպիսի ընտանիքներ կան այդ քաղաքում: Այդ գեղեցիկ, ծառազարդ տներում, — նա ձեռքը մեկնեց դէպի Այգեստանի տները, — բնակւում են երկու ծայրայեղութիւններ. ճոխութիւն, շռայլութիւն եւ վերին աստիճանի աղքատութիւն: Շռայլում են հարստահարիչ մեծատունները, իսկ հեծում են պարտքերի տակ ճնշոած թշոառները...

Այդպէս խօսելով գնում էինք մենք, երբ ճանապարհին հանդիպեց մեզ վարպետ Փանոսը:

— Այն հիւանդը կապրի՞, — հարցրեց նա, մօտենալով Ասլանին: